# Աննա Դավթյան

## Նկարեցինք այս երկիրը,

Նկարեցինք այս երկիրը,
ամենուր չորություններ դուրս եկան՝
քարեր, քիչ,
խորխորատ:
Քչությունից ծիլեր դուրս եկան՝
թափանցիկ,
քարերի գույնը դեռ մեջները,
ջուր ավելի, քան պնդություն:
Նվաղուն դուրս եկան քարերի մեջ,
մեծ ամպի տակ:
Նկարեցինք ամպերի տարածվելը,
մարգեր դուրս եկան քարերի մեջ՝
հավասար, գուգահեռ, կայտառ,
գծել էր մեկը:
Անձրև եկավ,
ոչ ոք չխանգարեց, որ ջրվեն ծառերը,
եկավ, փայլեցրեց տերևները,
կուտակվեց հողի մեջ:
Կանաչը բարձրացավ, շատացավ, լցրեց իրենով,
նկարեցինք այս երկիրը,
շողաց:
Շողում էր: